ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/3.1-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. հունիսի 6-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 8 (ութ) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

• «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի (25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ),

• **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի (14,835,000 (տասնչորս միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ),

• **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի (17,964,000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ),

• **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ**-ի (6,220,000 (վեց միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ),

• **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամի** (17,600,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ),

• **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական Հիմնադրամի** (19,965,000 (տասնինը միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ),

• **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի (22,145,833.33 (քսաներկու միլիոն հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ),

• **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի (45,758,300 (քառասունինգ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ) կողմից:

Լսեցին՝

Հայտերի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտերի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2025թ. հունիսի 11-ը, ժամը 15^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2025թ. հունիսի 11-ին, ժամը 17^{00}-ին:

Ա.Մկրտչյան
(Հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____